

## VIII. ՀՀ 2010թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2010 թվականի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան ճշտված նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (01.03.02.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2011թ. կազմել է 596785.2 հազ. դրամ՝ նախատեսված 598965.5 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 99.6%-ով (2009թ.-ին՝ 97.3%): 2010թ.-ին դրամարկղային ծախսը 2009թ. համեմատությամբ նվազել է 8746.2 հազ. դրամով, որը 2009թ. -ին կազմել էր 602174.0 հազ. դրամ /տես՝ հավելված 2/:

- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» (01.03.02.02) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2011թ. կազմել է 266625.7 հազ.դրամ՝ նախատեսված 270040.6 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.7%-ով (2009թ.-ին՝ 95.7%): 2010թ.-ին դրամարկղային ծախսը 2009թ. համեմատությամբ նվազել է 11566.0 հազ.դրամով, որը 2009թ. կազմել էր 278191.7 հազ. դրամ /տես՝ հավելված 2/:

- «2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (01.03.02.04) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2011թ. կազմել է 45817.7 հազ.դրամ՝ նախատեսված 47351.8 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 96.8%-ով (2009թ.-ին՝ 78.3%): 2010թ.-ին դրամարկղային ծախսը 2009թ. համեմատությամբ նվազել է 1037.7 հազ. դրամով, որը 2009թ. կազմել էր 44803.0 հազ. դրամ /տես՝ հավելված 2/:

- «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (01.01.03.04) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2011թ. կազմել է 1934.8 հազ. դրամ՝ նախատեսված 1934.8 հազ. դրամի դիմաց կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: 2010թ.-ին դրամարկղային ծախսը ևս կազմել է 1934.8 հազ. դրամ:

- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով 2010թ. մուտքը կազմել է 80214.5 հազ.դրամ, այդ թվում՝

  - «Միջազգային համադրումներ» ծրագրի շրջանակում՝ 3057.0 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 3056.9 հազ.դրամ: Ծրագրի նախապատրաստական փուլն ավարտված է:

  - «Մարդահամարի նպատակային դրամաշնորհ Իտալիայից» ծրագրի շրջանակում՝ 5634.2 հազ. դրամ, որից դրամարկղային ծախս չի իրականացվել:

  - «Մարդահամարի դրամաշնորհ դոնորներից» ծրագրի շրջանակում՝ 71523.3 հազ. դրամ, որից դրամարկղային ծախս չի իրականացվել:

  - Ընդամենը 3 ծրագրերի գծով առ 01.01.11թ. դրամարկղային ծախսը կազմել է 3056.9 հազ. դրամ: